

- 170 Ձոր եւ թէպէտ քաջ Սարգիս մեր  
Բոլորովին վաճառեալ էր ,  
Ձորոց եւ գինն իսկ առեալ էր ,  
Այլ ի կորուստ այնց յոյժ տըրտմէր :
- 171 Որոց գընօղն էր Տիրացու  
Գիտուն Գէորգն ի կեսարու  
Որ ի շարժին յայն ահարկու  
Ջընջմամբ մատնեալ լինէր մահու :
- 172 Յայնրմ վայրի Սոփեստ րաբուն ,  
Քաջ Բասենցի Տէր Բարութիւն ,  
Անդէն անուամբ շքով փայլուն  
Էր նուիրակ իջման տեղւոյն :
- 173 Ի նոյն ամի պարտ էր նրմա  
Գալ բընակել ի Ղալաթիայ ,  
Առ բոտել բաշին էջմիածնայ  
Ի ժամատան Լուսաւորչայ :
- 174 Բայց յարկ նոյն իսկ աղօթատան  
Գոլով երկուցն անբաւական ,  
Կախոյր Սարգիս զայլ օթարան  
Ի Միջագիւղ վայր զուարճական :
- 175 Եկեղեցին գեղջն այն պայծառ  
Ոչ ունելով Ռաբբեաց դադար՝  
Անդ իւր արդեամբ Պատրիարգն յար  
Վարձէր տուն ինչ Սարգսի յարմար :
- 176 Ուր յամարան նորին տարւոյ  
Սարգիս երթեալ նրստէր հաճոյ ,  
Առ որ եւ ես յետ մի ամսոյ  
Դադար կալայ առ մարդելոյ :